

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

Հանցագործության դեմ պայքարում Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության և Ուկրաինայի ներքին գործերի նախարարության միջև համագործակցության մասին

Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարությունը և Ուկրաինայի ներքին գործերի նախարարությունը, այսուհետ՝ Կողմեր,

կարևոր նշանակություն տալով հանցագործությունների դեմ պայքարում համագործակցության զարգացմանն ու քաղաքացիների իրավունքների և ազատության հուսալի պաշտպանության ապահովմանը,

ընդգծելով, որ հանցագործությունների դեմ անկախ պետությունների պայքարի հիմքում ընկած են փոխընթերցման, փոխշահավետության հարգման սկզբունքները,

դեկլարվելով Հայաստանի Հանրապետության և Ուկրաինայի ներքին գործերի մարմինների միջև համագործակցության և փոխադարձ վստահության զարգացման և ամրապնդման ցանկությամբ,

համաձայնեցին ներքոհիշյալի մասին.

Հոդված 1

Կողմերը, իրենց իրավասության շրջանակներում, հավասար պայմաններում, ապահովում են մեկը մյուսի քաղաքացիների և իրավաբանական անձանց ազատությունների, օրինական շահերի և ունեցվածքի պաշտպանությունը:

Կողմերը պարտավորվում են ապահովել ներքին գործերի մարմինների կողմից մեկը մյուսի քաղաքացիների և իրավաբանական դիմումների ու բողոքների ընդունումն ու քննարկումը այն հարցերով, որոնք մտնում են այդ մարմինների իրավասության մեջ:

Հոդված 2

Կողմերը, հենվելով իրենց պետություններում գործող օրենսդրության վրա, համագործակցությունն իրականացնում են հետևյալ բնագավառներում.

ա) անձի կյանքի, առողջության, ազատության, արժանապատվության և ունեցվածքի նկատմամբ հանցագործությունների դեմ պայքարի,

բ) բանդիտիզմի, ահաբեկչության և միջազգային հանցագործությունների դեմ պայքարի,

գ) զենքով ու զինամթերքով, պայթուցիկ, թունավոր ու ռադիոակտիվ նյութերի հետ կապված անօրինական գործողությունների դեմ պայքարի,

դ) թմրամիջոցների և հոգեմեդրոնոլ նյութերի անօրինական շրջանառության դեմ պայքարի,

ե) կեղծ դրամանիշների, արժեթղթերի, փաստաթղթերի պատրաստման և իրացման դեմ պայքարի,

զ) տնտեսության ոլորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի,

է) մաքսանենգության, ինչպես նաև այն հանցագործությունների դեմ պայքարի, որոնց օբյեկտ համարվում են մշակութային և պատմական արժեքները,

ը) հետաքննությունից, դատից, պատիժը կրելուց խուսափող, անհայտ կորած, ինչպես նաև ակիմենտ վճարելուց և դատարանների հայցավճիռները կատարելուց հրաժարվող անձանց հետախուզման,

թ) Կողմերից մեկի պետության տարածքում հափշտակված ունեցվածքի, այդ թվում՝ ավտոտրանսպորտի հետախուզման,

ժ) չճանաչված դիակների, անհայտ հիվանդների և երեխաների ինքնության պարզման,

ժա) ավտոմոբիլային, երկաթուղային, ջրային, օդային և խողովակաշարային տրանսպորտում կատարվող հանցագործությունների դեմ պայքարի,

ժբ) տարերային և այլ աղետների, խոշոր վթարների և հրդեհների հետևանքների վերացմանն ուղղված համատեղ միջոցառումներ անկացնելու գործում օգնելու,

ժգ) ճանապարհային երթևեկության և հակահրդեհային անվտանգության ապահովման,

ժդ) անձնագրային և թույլտվության համակարգի պահպանումը վերահսկելու,

ժե) պետական սահմանով մարդկանց, բեռների և արժեքների տեղափոխման վերահսկմանն օժանդակելու,

ժզ) գիտական, տեղեկատվական և տեխնիկական կապերի զազացման:

Կողմերը համագործակցում են փոխադարձ հետաքրքրություններ կայացնող նաև այլ ուղղություններով:

Հոդված 3

Այսուհետ, մինչ պետությունների կողմից փոխադարձ իրավական օգնություն ցույց տալու վերաբերյալ համապատասխան պայմանագրերի կնքումը, Կողմերը, հիմնվելով առկա կենսափորձի,

ազգային օրենսդրության, միջազգային իրավական նորմերի և փոխադարձ պայմանավորվածության վրա, պարտավորվում են հանցավորության դեմ պայքարում համագործակցությունն իրականացնել օպերատիվ- հետախուզական և դատավարական գործողություններ անցկացնելու, հարցումները և հանձնարարությունները կատարելու, ինչպես նաև երկու պետությունների օրենսդրություններին չհակասող այլ ձևերով:

Հոդված 4

Կողմերը համագործակցությունը իրականացնում են հետևյալ ձևերով.

ա) քրեական գործերով, օպերատիվ հաշվառման գործերով և վարչական իրավախախտումների վերաբերյալ նյութերով հարցումների և հանձնարարությունների կատարմամբ,

բ) նախապատրաստվող կամ կատարված հանցագործությունների և դրանց առնչվող անձանց վերաբերյալ օպերատիվ-հետախուզական, օպերատիվ-տեղեկատվական և քրեափորձագիտական, ինչպես նաև արխիվային նյութերի վերաբերյալ տեղեկության փոխանակմամբ,

գ) օպերատիվ-հետախուզական միջոցառումների և դատավարական գործողությունների անցկացման օժանդակությամբ,

դ) օրենսդրական և նորմատիվ ակտերի, ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող ուսումնական գրականության և աշխատանքային փորձի փոխանակմամբ, ինչպես նաև փոխադարձաբար կադրերի պատրաստմանը, վերապատրաստանը և նրանց որակավորման բարձրացմանն օժանդակություն ցույց տալով,

ե) ավտոմոբիլային, քրեագիտական և հատուկ տեխնիկայի, կապի միջոցների, հանդերձանքի և արտադրատեխնիկական նշանակության արտադրանքի փոխշահավետ մատակարարմամբ,

զ) հատուկ և այլ բեռների տարանցիկ փոխադրումների իրականացմանը, դատապարտյալների տեղափոխմանը և ուղեկցմանն աջակցելով,

է) ներքին գործերի մարմինների գործունեությանը վերաբերող գիտատեխնիկական տեղեկության փոխանակմամբ, փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող արդիական խնդիրների վերաբերյալ գիտական հետազոտությունների, մշակումների և ծրագրերի համատեղ անցկացմամբ,

ը) ծածկագրային կապի կազմակերպմամբ,

թ) մշակութային և մարզական կապերի զարգացմամբ, աշխատակիցների և նրանց ընտանիքների անդամների բուժմանը և

սանատորաառողջարանային վերականգնմանն օժանդակություն ցույց տալով:

Սույն Համաձայնագիրը Կողմերին չի արգելում մշակելու և զարգացնելու համագործակցության փոխընդունելի այլ ձևեր:

Հոդված 5

Կողմերը, ղեկավարվելով ազգային օրենսդրությամբ, պարտավորվում են իրենց պետությունների իրավասու մարմինների միջոցով, համաձայն մյուս Կողմի հարցումների և հանձնարարությունների, միմյանց օժանդակել՝

ա) քննությունից, դատից և պատիժը կրելուց խուսափողներին ձերբակալելու և անհրաժեշտության դեպքում կալանավորելու հարցերում,

բ) քրեական պատասխանատվության ենթարկելու կամ նրանց նկատմամբ կայացած դատավճիռը ի կատար ածելու համար անձանց համապատասխան Կողմին հանձնելու հարցերում:

Հոդված 6

Սույն Համաձայնագրի կատարման նպատակով Կողմերի ՆԳ մարմինների կառուցվածքային ստորաբաժանումները, այսուհետ՝ կառուցվածքային ստորաբաժանումներ, իրենց իրավասության սահմաններում և նախարարությունների ղեկավարության թույլտվությամբ կարող են հաստատել անմիջական շփումներ և ստորագրել լրացուցիչ պայմանագրային փաստաթղթեր՝ իրենց գործունեության առանձին ուղղություններով համագործակցելու մասին:

Հոդված 7

1. Սույն Համաձայնագրի 4-րդ հոդվածի «ա» մասով նախատեսված հարցումներն ու հանձնարարությունները պետք է պատշաճ կերպով ձևակերպված լինեն և ունենան հետևյալ ռեկվիզիտները՝

ա) հարցումը կամ հանձնարարությունը ուղարկող կառուցվածքային ստորաբաժանման և այն կառուցվածքային ստորաբաժանման անվանումը, ում դրանք ուղղված են,

բ) գործերի կամ նյութերի, որոնց վերաբերյալ ուղարկվում է հարցումը կամ հանձնարարությունը, անվանումը,

գ) վկաների, տուժողների կասկածյալների, մեղադրյալների, հետախուզվողների, ամբաստանյալների կամ դատապարտյալների ազգանունները, նրանց քաղաքացիությունը, զբաղմունքը, մշտական

բնակության վայրը կամ գտնվելու վայրը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նրանց օրինական ներկայացուցիչների ազգանունները և հասցեները,

դ) հարցման կամ հանձնարարության բովանդակությունը, ինչպես նաև հանցակազմի նկարագրությունը:

2. Հարցմանը կամ հանձնարարությանը նաև կցվում են պատշաճ կերպով ձևակերպված հատուկ որոշումները, որոնք անհրաժեշտ են թույլատրված գործողություններ կատարելու համար:

3. Հարցումները կամ հանձնարարությունները պետք է հաստատված լինեն ներքին գործերի մարմնի զինանշանով կնիքով և ղեկավարի ստորագրությամբ: Կողմերը հարցումներն ու հանձնարարությունները կատարելիս օգտվում են ռուսերենից:

4. Հարցումն ուղարկող Կողմի պետական լեզվով կազմված հարցումներին և հանձնարարություններին կից փաստաթղթերին կցվում է նաև դրանց ռուսերեն թարգմանված և հաստատված տեքստը:

5. Հարցման կամ հանձնարարության կատարման ընթացքում կատարող Կողմի պետական լեզվով կազմված փաստաթղթերը նրա կողմից թարգմանվում են ռուսերեն:

6. Թարգմանությունները վավերացվում են պաշտոնատար անձի ստորագրությամբ և իրավասու հիմնարկի կնիքով:

7. Անհետաձգելի դեպքերում կարող են կատարվել բանավոր հարցումներ, սակայն դրանք անհապաղ պետք է հաստատվեն գրավոր, այդ թվում՝ տեքստի հաղորդման տեխնիկական միջոցների օգտագործմամբ:

Հոդված 8

1. Կողմերից յուրաքանչյուրը կարող է հրաժարվել համագործակցելուց կամ օգնություն ցույց տալուց, եթե դրանց իրականացումը կարող է սպառնալ իր ինքնիշխանությանը կամ էական շահերին, ինչպես նաև, եթե դրանք հակասում են իր տարածքում գործող օրենսդրությանը:

2. Օգնելուց կամ օժանդակելուց հրաժարվելու դեպքում Կողմերը անհապաղ տեղեկացնում են միմյանց:

Հոդված 9

1. Կողմերից յուրաքանչյուրը ապահովում է հաղորդող Կողմի տեղեկությունների գաղտնիությունը, եթե դրանք տվյալ Կողմի օրենսդրությամբ կրում են փակ բնույթ: Տեղեկությունների փակ լինելու աստիճանը որոշում է հաղորդող Կողմը:

2. Սույն Համաձայնագրի հիման վրա ստացված նյութերը, տեղեկությունը, ինչպես նաև տեխնիկական սարքավորումները երրորդ կողմի կարող են տրվել բացառապես դրանք տրամադրող Կողմի համապատասխան մարմնի կամ կառուցվածքային ստորաբաժանման համաձայնությունը ստանալուց հետո միայն:

Հոդված 10

1. Կողմերը, փոխադարձ պայմանավորվածությամբ, իրենց աշխատակիցներին կարող են գործուղել մյուս Կողմի ներքին գործերի մարմիններ:

2. Ծառայողական գործուղման մեջ գտնվող աշխատակիցներին ցույց է տրվում անհրաժեշտ օգնություն նրանց վրա դրված պարտականությունների կատարման գործում, ապահովվում է նրանց իրավական պաշտպանվածությունը՝ Կողմերի պետություններում գործող օրենսդրությանը համապատասխան:

Հոդված 11

1. Կողմերը պայմանավորվել են, անհատական կարգով և հաշվի առնելով ազգային օրենսդրությունը, քննարկել մյուս Կողմի ներքին գործերի մարմիններում ծառայության ընդունելու հարցերը, լուծել երկարամյա ծառայության համար տոկոսային հավելումների վճարման նպատակով նրանց ծառայողական ստաժը պահպանելու, պետական թոշակներ նշանակելու հարցերը և չափը՝ սահմանված կարգով՝ այն Կողմի ներքին գործերի մարմինների աշխատողների համար, ուր կատարվել է տեղափոխությունը:

2. Կողմերը նաև պայմանավորվել են սահմանված կարգով իրագործել Կողմերի պետությունների տարածքում մշտապես բնակվող ներքին զորքերի զինծառայողների, ներքին գործերի մարմինների հրամանատարական ու շարքային կազմի, ինչպես նաև նրանց ընտանիքների անդամների կենսաթոշակի ապահովման հարցերը՝ այնտեղ գործող կենսաթոշակային օրենսդրության համաձայն:

Հոդված 12

Համագործակցություն իրականացնելիս Կողմերն օգտվում են հայերենից, ուկրաիներենից կամ ռուսերենից՝ անհրաժեշտության դեպքում օգտվելով թարգմանչի ծառայությունից:

Հոդված 13

1. Կողմերի լիազորված ներկայացուցիչները անհրաժեշտության դեպքում հանդիպում են միմյանց՝ սույն Համաձայնագրի դրույթների իրականացման հետ կապված հարցերի համաձայնեցման համար:

2. Երկու Կողմերի համաձայնությամբ սույն Համաձայնագրում կարող են մտցվել փոփոխություններ և լրացումներ:

Հոդված 14

Սույն Համաձայնագրի դրույթները չեն շոշափում Կողմերի՝ միջազգային այլ պայմանագրերով և համաձայնագրերով ստանձնած պարտավորությունները:

Հոդված 15

Կողմերը ինքնուրույն կկատարեն սույն Համաձայնագրի գործողության ընթացքում առաջացող ծախսերը, եթե այլ կարգ չի սահմանվի:

Հոդված 16

Սույն Համաձայնագիրը կնքված է 10 տարի ժամանակով և կգործի մինչև վեց ամիս լրանալը՝ հաշված այն օրից, երբ Կողմերից մեկը մյուս Կողմից կստանա գրավոր ծանուցում Համաձայնագրի գործողության դադարեցնելու նրա մտադրության մասին:

Կատարված է Կիև քաղաքում 1992 թվականի հոկտեմբերի 22-ին, երկու օրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն և ուկրաիներեն, ընդ որում երկու լեզուներով տեքստերն էլ հավասարազոր են:

Համաձայնագիրն ուժի մեջ է մտել 1992 թվականի հոկտեմբերի 22-ից: